հասարակաց ասել ցծնողսդ. Տո՛ւր փառս Աստուծոյ, զի պտուղ որովայնի քո յաղիւնն ճոխացեալ լինի։ Ո՞ւր էր օրն այն սփոփանաց առիթ՝ ասել ցծնողս թէ Տէր ետ եւ Տէր էառ, եղիցի անուն Տեառն օրհնեալ։ Ո՞ւր էր օրն այն պատգամ պատշաճի բարեբաստութեան վախճանի համայնից, եթէ ընթեռնլով զԱւետարանն ի վերայ՝ եթէ ոչ հատն ցորենոյն անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, իսկ եթէ մեռանիցի՝ զբազում արդիւնս առնէ յօրհնեալ արքայութեան։ Ո՞ւր էր պահն այն բարեդէպ՝ ասել ցնա Հող էիր եւ ի հող դարձցիս, զի ի միւսանգամ գալստեանն Տեառն հայրախնամ փառօք՝ նոր նորոգեսցէ զքեզ փառօք ի փառս։ Ո՞ւր էր օրն այն քրիստոսապայման՝ խնկօք եւ մոմովք զնա մեծարեալ բարեկամք եւ սիրելիք ժողովեալ առ ձեօք ի մխիթարել։

Արդ սոցին փոխարէն գուժ մահաբեր յանկարծակի (?) եւ բօթ տխրագին անել խոցիւք մշանջենաւոր, ըստ որում Տէրն ասէր վասն Յուդայի՝ Ուռն որ ոչ էր յիս հաստատեալ՝ ահա՛ ել արտաքս եւ ցամաքեցաւ. եւ այլ թէ ժողովին եւ ի հուր այրեն, զի ոչ գտաւ տեղի շտեմարանիլ ի տան Հօր իւրոյ։ Աւա՜ղ դառնութեան լսելեաց ձերոց, եղկութիւն դժնդակ տանելեաց ձերոց, որ ոչ չիջանի եռանդն բորբոքեալ հրոյդ որ անկաւ ի սիրտս ձեր։ Թէպէտ կարծի կերպիւ ինչ ջրովս զովացման բանիս ազդել ի սիրտ ձեր եւ չիջուցանել սակաւ ինչ եթէ Օրհնեցաւ Աբէլ հաճութեամբ Տեառն եւ անիծաւ Կային հետեւելով հին մարդասպանին չարութեան, որպէս ասէր Տէրն ուրացողաց Հրէից զի Դուք որդիք նորա էք մարդասպանին որ ի ճշմարտութեան ոչ եկաց, այլ ապստամբեցաւ յԱրարչէն՝ որպէս եւ դա իսկ, ուստի խոցեցայք յապստամբութեան դորա որ ի ձէնջ դարձաւ մոռացեալ զդութ ծնողացդ եւ զուխտն աստուածեղէն զլացեալ կորեաւ։ Մխիթա-